

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

ABSTRACT ON CURRENT APPROACHES TO THE CONCEPT OF POLITENESS

In recent decades abundant linguistic and interdisciplinary research has focused on the study of conditions for communicative success and effectiveness. In the light of these studies the concept of politeness has gained special importance. It is viewed as a special communicative-pragmatic category regulating speech behavior. This article aims at studying and analysing the current theories and approaches to the concept of politeness, focusing specifically on the analysis of politeness principles, maxims and postulates advanced by Grice, Leech, Goffman, Lakoff, Brown and Levinson.

Key words: *politeness, Politeness Principle, Cooperative Principle, maxims, postulates, conventionalism*

РЕЗЮМЕ АКТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ К ИНТЕРПРЕТАЦИИ КОНЦЕПТА ВЕЖЛИВОСТИ

В последние десятилетия в центре внимания лингвистических и междисциплинарных

исследований находится изучение условий успешности и эффективности процесса коммуникации. В свете этих исследований особую важность приобретает концепт вежливости, который рассматривается как отдельная коммуникативно-прагматическая категория, регулирующая речевое поведение человека. Целью данной статьи является изучение и анализ современных теорий и подходов к интерпретации концепта вежливости: в частности, принципы, максимы и постулаты вежливости, разработанные Грайсом, Личом, Гоффманом, Лакофф, Брауном и Левинсоном.

Ключевые слова: *вежливость, принцип вежливости, принцип сотрудничества, максимы, постулаты, конвенционализм.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին տասնամյակներում լեզվաբանական և միջգիտակարգային հետազոտությունների ուշադրության կենտրոնում է հաղորդակցման գործընթացի արդյունավետության և հաջողության պայմանների ուսումնասիրությունը, ինչի լույսի ներքո հատուկ կարևորություն է ձեռք բերել քաղաքավարության հասկացությունը: Այն դիտարկվում է որպես մարդու խոսքային վարքը կարգավորող յուրահատուկ հաղորդակցական-գործաբանական կարգ: Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել և վերլուծել քաղաքավարության հասկացության վերաբերյալ արդի տեսություններն ու մոտեցումները՝ մասնավորապես կենտրոնանալով Գրայսի, Լիչի, Գոֆմանի, Լակոֆի, Բրաունի և Լևինսոնի քաղաքավարության սկզբունքների, մաքսիմների և պոստուլատների վերլուծության վրա:

Բանալի բառեր՝ քաղաքավարություն, քաղաքավարության սկզբունք, համագործակցության սկզբունք, մաքսիմներ, պոստուլատներ, կոնվենցիոնալիզմ:

Քաղաքավարության հասկացության հիմքում անշուշտ ընկած է գրուցակցի նկատմամբ հարգանքի պահպանման կարիքը: Ըստ Ե. Ա. Ջեմսկայայի՝ քաղաքավարությունը դիտարկվում է որպես մարդու խոսքային վարքը կարգավորող յուրահատուկ հաղորդակցական-գործաբանական կարգ (Земская, 1994): Քաղաքավարություն հասկացության մեջ մտնող հիմնական իմաստային բաղադրիչների հայտնաբերման փորձն առավել հետևողականորեն արտահայտվել է Պ. Գրայսի (1975), Ջ. Լիչի (1983) և Ջ. Լակոֆի (1973) աշխատություններում, որոնցում սահմանվել են քաղաքավարության մաքսիմները և պոստուլատները, իսկ Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի, ինչպես նաև Կարասիկի կողմից սահմանվել է քաղաքավարության հիմնական բովանդակությունը՝ հարգանքը գրուցակցի նկատմամբ և նրա տարբեր երանգները՝ հարգալիցությունը, նրբակրթությունը, բարեկրթությունը և այլն, ինչպես նաև դրական վերաբերմունքը (Brown & Levinson, 1987, Карасик, 1992):

Այս ուղղությամբ կատարված աշխատանքների շարքում հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում Հ.Պ. Գրայսի կողմից մշակված Համա-

գործակցության սկզբունքը (Principle of Cooperation), որը բաղկացած է չորս մաքսիմներից.

1. որակի /անկեղծությունը/ (Quality),
2. քանակի /տեղեկատվության չափը/ (Quantity),
3. համապատասխանության /ասվածի տեղին լինելը/ (Relevance),
4. ձևի /արտահայտման հստակությունը/ (Manner) (Grice, 1975):

Այս մաքսիմները պատկանում են խոսքային վարքի կանոններին, և նրանցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է մի քանի պոստուլատ: Դիտարկենք դրանք առավել մանրամասնորեն.

1. Որակի մաքսիմը բաղկացած է հետևյալ պոստուլատներից.
 - մի՛ ասա մի բան, որն ի սկզբանե քեզ համար ճշմարիտ չի,
 - մի՛ ասա մի բան, որ չես կարող հիմնավոր կերպով ապացուցել:
2. Քանակի մաքսիմը բաղկացած է հետևյալ պոստուլատներից.
 - հաղորդումը պետք է պարունակի այնքան տեղեկություն որքան պահանջվում է տվյալ հաղորդակցման նպատակի համար,
 - հաղորդումը չպետք է լինի ավելի տեղեկատվական, քան պահանջվում է:
3. Համապատասխանության մաքսիմը բաղկացած է մեկ պոստուլատից.
 - ասա՛ այն, ինչ տեղին է:
4. Ձևի մաքսիմը բաղկացած է փոխկապակցված չորս պոստուլատներից.
 - խուսափի՛ր աղոտ արտահայտություններից,
 - խուսափի՛ր երկիմաստությունից,
 - խոսի՛ր հակիրճ,
 - խոսիր կանոնակարգված (Grice, 1975, 121-134):

Բացի պոստուլատների 4 մաքսիմներով ներկայացվող Համագործակցության սկզբունքից, Ն. Պ. Գրայսը առանձնացնում է նաև Քաղաքավարության սկզբունքը, Գեղագիտական մաքսիմը և այլն, բայց նրանց

տալիս է երկրորդային նշանակություն՝ հաղորդակցման հաջողության հիմնական ցուցանիշ համարելով Համագործակցության սկզբունքի պահպանումը: Գ. Պ. Գրայսը մնացած հաղորդակցային պոստուլատներից Քաղաքավարության սկզբունքն առանձնացրեց՝ որպես շփման էթիկական, բարոյական կողմը բավարարող սկզբունք (Grice, 1975):

Կ. Ժանը դիտարկում է անհստակ ասությունների չորս տեսակ՝ անհստակություն (fuzziness), արդտություն (vagueness), ընդհանրականություն (generality), երկիմաստություն (ambiguity): Պայմանականության դիտանկյունից, նշված երևույթներից առաջին երեքը լեզվում դիտարկվում են որպես «բացասական երևույթներ»: Մյուս կողմից, նրանք չեն հակասում Գրայսի Համագործակցության մաքսիմների: Կ. Ժանը համամիտ է Գրայսի հետ, որն էլ նրան հնարավորություն է տալիս «անհստակություն», «արդտություն», «ընդհանրականություն» երևույթները դիտարկել որպես նորմալ երևույթներ, որոնք ունեն իրենց որոշակի դերը լեզվական հաղորդակցման մեջ (Zhang, 1998):

Ռ. Լակոֆը խնդրի լուծմանը հակառակ կողմից է մոտենում: Նա Քաղաքավարության մաքսիմը բարձրացնում է Քաղաքավարության սկզբունքի կարգին, որին ստորադասվում է Հ. Պ. Գրայսի Համագործակցության սկզբունքը: Ռ. Լակոֆն առանձնացնում է քաղաքավարության հետևյալ կանոնները.

1. ձեզ մի՛ պարտադրեք դիմացինին,
2. ձեր գրուցակցին տվե՛ք ընտրության հնարավորություն,
3. վերաբերման կարգ,
4. միջոցի կարգ (տե՛ս՝ Lakoff, 1973):

Քաղաքավարության կանոնների հետևողական ուսումնասիրություն է կատարել նաև Ջ. Լիչը:

Մի շարք հեղինակների կարծիքով, հաջող հաղորդակցման հասնելու համար մեծ նշանակություն ունի նրա կողմից ձևակերպված Քաղաքավարության սկզբունքի պահպանումը (տե՛ս՝ Leech, 1983, Brown & Levinson, 1978, Goffman, 1981):

Ջ. Լիչի մաքսիմները կենտրոնական տեղ են գրավում քաղաքավարության իմաստաբանության մեջ: Ըստ Ջ. Լիչի՝ քաղաքավարի լինել նշանակում է լինել հարգալից /1/, նրբանկատ /2/, մեծահոգի /3/, հավանություն տվող /4/, համաձայնող /5/, կարեկցող /6/, համեստ /7/: Այդուհանդերձ, գործնականում անհնար է բոլոր այս մաքսիմների անվերապահ կատարումը. հատկապես անիրագործելի են 4-րդ և 5-րդ կետերը (տե՛ս՝ Демьянников, 1982, Винокур, 1993, Ермакова, Земская, 1993 և ուրիշներ): Ջ. Լիչի դասակարգման հիմքում ընկած է ոչ կոնֆլիկտային հասարակական վարքի սկզբունքը (Leech, 1983):

Վերը նշված տեսությունների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ քաղաքավարության մաքսիմները հաճախ հակասության մեջ են մտնում հաղորդակցման Համագործակցության սկզբունքի հետ, չնայած որ երկուսն էլ կոչված են ապահովելու խոսքային փոխազդեցության արդյունավետությունը: Ռազմավարության մեջ միևնույն ուղղությամբ շարժվելով՝ նրանք հակադրվում են մարտավարության հարցերում (տե՛ս՝ Земская, 1994, Винокур, 1993, Формановская, 1982): Հետևաբար, քաղաքավարության մաքսիմների ուսումնասիրությունը դառնում է քաղաքավարության նորմերի խախտումների խնդրի հետազոտությունը, քանի որ այդ խախտումներն են, որ բերում են հաղորդակցային անհաջողությունների:

Կենդանի խոսքի և լեզվական շփման կոնկրետ գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրական, ինքնաբերիկ խոսքում մարդիկ շատ հաճախ չեն հետևում պոստուլատներին (տե՛ս՝ Винокур, 1993, Ермакова, Земская, 1993): «Խոսողները հաճախ չեն լինում հակիրճ և բավարար չափով տեղեկացնող (informative), բացի այդ, նրանք կարող են ասել ավելորդ բաներ, ոչ միշտ են ասում ճշմարտությունը, ոչ միշտ են հստակ խոսում, իսկ ոչ հազվադեպ էլ ասում են մի բան՝ մեկ այլ բան հասկացնելու ցանկությամբ» («Русский язык в его функционировании», 1993, 35):

Խոսողի համար անկեղծության պահանջը՝ որպես խոսքային ակտի հաջողության պայման, ունի իրավիճակային կախվածություն,

այսինքն՝ ոչ միշտ է գործում, քանի որ պայմանական շփման մեջ գերակշռում են քաղաքավարության, էթիկայի պահպանման ավանդաբար ձևավորված սկզբունքները, օրինակ՝ տանտիրուհուն հաճոյախոսել ընթրիքի կապակցությամբ: Սակայն լսողի համար խոսողի անկեղծության գործոնը միշտ էական է:

Ռ. Լակոֆը Համագործակցության և Քաղաքավարության սկզբունքների նշանակությունը հանգեցնելով «արտահայտվիր հստակ» և «եղիր քաղաքավարի», կանոններին՝ նույնպես գտնում է, որ Քաղաքավարության սկզբունքի պահպանումը հաճախ հակասում է Համագործակցության սկզբունքին: Սակայն այս դեպքում քաղաքավարության նորմերի պահպանումն ավելի կարևոր է, քանի որ ոչ պաշտոնական խոսքում կարևոր մտքերի փոխանցումն ավելի նվազ նշանակություն ունի, քան հարաբերությունների հաստատումն ու ամրապնդումը: Ռ. Լակոֆն առանձնացնում է քաղաքավարության երեք կանոն.

1. քեզ մի՛ պարտադրիր դիմացինին,
2. դիմացինին տու՛ր ընտրության իրավունք,
3. արա այնպես, որ դիմացինն իրեն լավ զգա, պահի՛ր քեզ բարեկամաբար (Lakoff R., 1973, 298):

Ոչ պաշտոնական խոսակցության մեջ Քաղաքավարության սկզբունքի պահպանման կարևորությունը վերաբերող Ռ. Լակոֆի եզրահանգումները վկայում են խոսքային փոխազդեցության պայմանական տեսակի ուսումնասիրման արդիականության մասին:

Քաղաքավարի վարքում կարևոր դեր են խաղում դրական և բացասական քաղաքավարության հասկացությունները: Ջ. Լիչը պնդում է, որ բացասական քաղաքավարությունը /տարաձայնությունից խուսափելու ձգտումը/ ավելի կարևոր է, քան դրական քաղաքավարությունը /համաձայնության ձգտումը/ (Leech, 1983, 133):

Ռ. Բրաունը և Ս. Լևինսոնը ընդգծում են քաղաքավարության ձևերի կախումը շփման իրավիճակից՝ պաշտոնական/ոչ պաշտոնական, դերերի հարաբերակցություն և այլն, և գտնում, որ քաղաքավարու-

թյան ռազմավարություններն ուղղված են այն բանին, որ լսողը «պահպանի իր դեմքը»՝ դրանով հաստատելով պայմանական հարաբերությունների պահպանման անհրաժեշտությունը: «Դեմքը» տերմինով նրանք հասկանում են սեփական անձի և խոսակցի անձի նկատմամբ խոսողի ունեցած հարգանքը և սեփական արժեքի պահպանումը բոլոր տեսակի պաշտոնական և ոչ պաշտոնական իրադրություններում: Առանձնացնելով քաղաքավարության ռազմավարության 4 տեսակ՝ Ռ. Բրաունը և Ս. Լևինսոնը, «դրական քաղաքավարություն» ասելով, հասկանում են լսողի նկատմամբ բարեկամական զգացումի և հարգանքի արտահայտումը, իսկ «բացասական քաղաքավարությամբ» հասկանում են լսողին նեղություն պատճառելու, խանգարելու վախը, ինչը ենթադրում է գրուցակիցների միջև որոշակի սոցիալական հեռավորություն (տե՛ս՝ Brown & Levinson, 1987):

Խոսելով խոսքային վարքի մասին՝ «կոնվենցիոնալ» տերմինը հաճախ գերադասվում է «էթիկետայինից», քանի որ լեզվագործաբանական ուսումնասիրությունները կենտրոնանում են ոչ այնքան էթիկայի կանոններով ընդունված խոսքային վարքի ձևերի, որքան խոսքային վարքի այն պայմանականությունների վրա, որոնք համարվում են սոցիալապես ընդունելի, նույնիսկ եթե ձևի տեսանկյունից չեն համարվում խիստ նորմատիվային:

Այսպիսով, կոնվենցիոնալ ասույթների առանձնահատկություններից կարող ենք նշել այն, որ նրանց ձևի առանձնահատկությունը դիսկուրսի տրամաբանական-բովանդակային տեսանկյունից պարտադիր չէ: Նրանց կիրառումը պայմանավորված է խոսքային շփման հարմարության ապահովման գործոնով: Այդպիսի ասույթների առանձնահատկությունները խոսում են հաղորդակցվողի սոցիալական մակարդակի, երկխոսության հաջող ընթացքին նպաստելու նրա ցանկության մասին: Երկխոսության հաջող ընթացքի համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր հաղորդակցվող հստակ կատարի իր պայմանական դերը խոսքային փոխազդեցության մեջ: Այս տեսանկյունից, պայմանական պետք է համարել, օրինակ, «հաղորդակցվողի նախազգուշական

վարքի այն կաղապարը», որը տալիս է խոսողի կողմից արտակա կերպով պահանջված տեղեկությունից ավելի շատ տեղեկություն, որպեսզի հաղթահարվեն նպատակին հասնելու ճանապարհին խոսողի առջև ծառայած արգելքները» (Аллен, Перро, 1986, 323):

Հիմնվելով ռուս և արևմտյան գիտնականների՝ վերը ներկայացված աշխատություններում քաղաքավարության հասկացության վերաբերյալ տարբեր մոտեցումների վրա՝ կարելի է ասել, որ քաղաքավարի լինել նշանակում է լինել հարգալից, նրբանկատ, մեծահոգի, ըմբռնող, համագործակցող, հավանություն տվող, խոսքը հստակ կազմող և տվյալ հասարակության մեջ ընդունված վարքի, ներառյալ՝ խոսքային վարքի կանոններին հետևող: Ինչպես արդեն վերևում նշեցինք, իրական հաղորդակցման մեջ այդ պահանջները միշտ չէ, որ պատշաճ կերպով կիրառվում են, սակայն հաղորդակցվողներին հատուկ է դրանք իրագործելու ձգտումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Brown P., Levinson S.** (1978), *Universals in Language Usage: Politeness Phenomena // Questions and Politeness: Strategies in Social Interactions*. Ed. by Goody E.N., Cambridge, Cambridge University Press.
2. **Brown P., Levinson S.** (1987), *Politeness: Some Universals in Language Usage*, Cambridge UP, 30-198.
3. **Goffman E.** (1967), *On face-work: An analysis of ritual elements in social interaction*. In E. Goffman (Ed.), *Interaction Ritual*, Garden City, NY, Anchor Books, p. 5-46.
4. **Goffman E.** (1981), *Forms of Talk*. – Philadelphia, p. 335.
5. **Grice H.P.** (1975), *Logic and Conversation*. – In: “Syntax and Semantics”, v. 3, ed. by P. Cole and J.L. Morgan, N.Y., Academic Press, p. 45-134.
6. **Lakoff R.** (1973), *The logic of politeness: or, Minding your p’s and q’s // Papers from the Ninth Regional Meeting: Chicago Linguistic Society*. - #9, Chicago, University of Chicago, p. 292-305.
7. **Leech G.N.** (1983), *Principles of Pragmatics*. London – N.Y., Longman, pp. 3-318.

8. **Zhang Q.** (1998), Fuzziness – vagueness – generality – ambiguity // Journal of pragmatics, vol. 29, #1, p. 31.
9. **Аллен Дж.Ф., Перро Р.** (1986), Выявление коммуникативного намерения, содержащегося в высказывании. // Новое в зарубежной лингвистике, Вып. 17, М., Прогресс, с. 322-363.
10. **Винокур Т.Г.** (1993), Говорящий и слушающий. Варианты речевого поведения. М., Наука, с. 60, 172.
11. **Демьянников В.З.** (1982), Конвенции, правила и стратегии общения (интерпретирующий подход к аргументации). Известия АН СССР, Серия лит-ры и языка. #4, с. 327-337.
12. **Ермакова О.Н., Земская Е.А.** (1993), К построению типологии коммуникативных неудач (на материале естественного русского диалога) // Русский язык в его функционировании. Коммуникативно - прагматический аспект. М., с. 20, 65.
13. **Земская Е.А.** (1994), Категория вежливости в контексте речевых действий // Логический анализ языка: Язык речевых действий. М., Наука.
14. **Карасик В.И.** (1992), Язык социального статуса. М., Институт языкознания РАН, Волгогр. гос. пед. институт.
15. Русский язык в его функционировании: коммуникативно-прагматический аспект. √ М., 1993, с. 35, 221.
16. **Формановская Н.И.** (1982), Употребление русского речевого этикета. М., с.4, 201.

Հովսեփյան Գոհար – բ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլիական բանասիրության ամբիոն, էլ. փոստ՝ gohar.hovsepyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն՝ 08.12.21, տրվել է գրախոսության՝ 13.12.21 - 20.12.21, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 25.12.21: